ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, /094-55-33-04, lernanist1828@mail.ru,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՓԵՏՐՎԱՐԻ 2020 թվականի N 9-Ա

ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՔԱՐՈՋՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՎՃԱՐ ՏԵՂԵՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Ընտրական օրենսգրքի 21-րդ հոդվածի 3-րդ մասի և Հանրաքվեի մասին օրենքի 18-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջների համաձայն

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. 2020 թվականի ապրիլի 5-ին նշանակված Հայաստանի Հանրապետության Սահմանադրական փոփոխությունների հանրաքվե անցկացնելու համար Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի տարածքում քարոզչական պաստառներ փակցնելու համար անվճար տեղերն են՝

1) 1-ին և 2-րդ փողոցների հատմանն հարողտարածք
2) 1-ին փողոց 28 շենքին հարող տարածք
3) 1-ին փողոց 42 /1 շենքին հարող տարածք
4) 1-ին փողոց 12 նրբանցք 3 –րդ շենք / շենք/
5) 2-րդ փողոց 52/1 շենքին հարող տարածք

հասցեներում գտնվող ցուցատախտակները:

2. Սույն որոշման կատարման հսկողությունը դրվում է համայնքի ղեկավարի տեղակալի վրա:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում կատարման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**

2020 թ.10 փետրվարի
գ.Լեռնանիստ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, /094-55-33-04, lernanist1828@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՓԵՏՐՎԱՐԻ 2020 թվականի N 10-Ա

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԸՆՏՐԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի և Հանրաքվեի մասին օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ՝

1. 2020 թվականի ապրիլի 5-ին նշանակված Հայաստանի Հանրապետության Սահմանադրական հանրաքվե անցկացնելու համար Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքում ընտրական տեղամասային կենտրոններ սահմանել՝

1) Լեռնանիստի միջնակարգ դպրոցում՝ հասցեն 1 -ին փողոց 33 շենք

2) Լեռնանիստի մանկապարտեզում՝ հասցեն 4-րդ թաղամաս 6 շենք

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

2020թ. փետրվարի 10
գ.Լեռնանիստ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, /094-55-33-04, lernanist1828@mail.ru,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 11-Ա

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի,«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի,Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն և N 912-Ն որոշումների,Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 48-րդ կետերի.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի սեփականություն հանդիսացող 0.0825 հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության գյուղատնտեսական արտադրական գործառնական նշանակությամբ հողամասում Դավիթ Քյարամի Ադամյանի կողմից ինքնակամ կառուցված 167.44 քմ արտաքին մակերեսով անասնաշենքը և 108.0 քմ արտաքին մակերեսով մեղվանոցը համարել Լեռնանիստ համայնքի սեփականություն և ճանաչել օրինական համաձայն հատակագծի:
2.Ընդունել ի գիտություն,որ
1) շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.
2) շինությունները կառուցված չեն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա,ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում.
3) շինությունները կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ Լեռնանիստ համայնք 6-րդ թաղամաս թիվ 23 :
4. Սույն որոշումից ծագող իրավունքի պետական գրանցման օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկություն անել ինքնակամ կառույցները իրականացրած Դավիթ Քյարամի Ադամյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված շինությունները և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) տրամադրելու մասին:
5. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**

2020 թ. փետրվարի 13
գ.Լեռնանիստ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, /094-55-33-04, lernanist1828@mail.ru,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՓԵՏՐՎԱՐԻ 2020 թվականի N 12-Ա

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԳԵՏԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԻ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Համայնքային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Կոտայքի մարզի Լեռնանիստի համայնքապետարանի աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետի թափուր պաշտոնի համար հայտարարել մրցույթ.

2. Մրցույթը կկայանա 2020 թվականի ապրիլի 7-ին ժամը 11:00-ին:

3. Լեռնանիստի համայնքապետարանի աշխատակազմի՝

1) Սահմանված կարգով իրականացնել մրցույթի նախապատրաստական աշխատանքները:

4. Հանձնաժողովի նիստերի տեխնիկական սպասարկումն իրականացնող լիազոր ներկայացուցիչ նշանակել Լեռնանիստ համայնքի ղեկավարի տեղակալ՝ Արտակ Ադամյանին:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

2020 թ. փետրվարի 13
գ.Լեռնանիստ